ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԲԱՆԱՎԵՃԻ ՄԵԹՈԴԻ ՄԻՋՈՑՈՎ

ԱՍՈՅԱՆ ԹԱԹՈՒԼ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան
էլփոստ՝ asoyan.60@mail.ru
ԲՐԱԳԻՆԱ ՆԵԼԼԻ
ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
տարրական մանկավարժության և մեթոդիկայի բաժնի
մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ nelli.bragina@list.ru

Հոդվածում ներկայացված են տարրական դասարանում մայրենիի ուսուցման ընթացքում բանավեճի մեթոդի կիրառմամբ փորձարարական ուսուցման արդյունքները: Մշակվել է քայլային հաջորդականություն, որը փորձարկվել է Գագարինի միջնակարգ դպրոցի չորրորդ դասարանում՝ մայրենիի ուսուցման ժամանակ: Հիմնական նպատակն է եղել փորձարարական ուսուցման միջոցով ստուգել, թե տվյալ մեթոդի կիրառումը որքանով է նպաստում սովորողների մոտիվացիայի ձևավորմանը: Ստացված արդյունքները թույլ են տալիս հավաստել, որ բանավեճի մեթոդն օգնում է ձևավորել ու զարգացնել սովորողների մոտիվացիան: Մեթոդի կիրառությունը նախադրյալներ է ստեղծում սովորողների ստեղծագործ ներուժի բացահայտման և վերլուծական մտքի ձևավորման համար: Հարկ է նշել, որ բանավեճի մեթոդը ժամանակատար է և ենթադրում է որոշակի նախապատրաստական աշխատանք և՛ ուսուցչի, և՛ սովորողների կողմից: Այնուամենայնիվ, կարող ենք արձանագրել, որ մեթոդը նպաստում է մոտիվացիայի կայուն զարգացմանը: Այն զարգացնում է նաև բանավոր խոսքն ու մարզում է միտքը, հաղորդակցման հմտությունների բազմամակարդակ ընկալում է առաջացնում:

Բանալի բառեր՝ *մոտիվացիա, բանավեճ, մեթոդ, փորձարարական ուսուցում, փոխներգործություն, ստեղծագործ ներուժ:*

Ժամանակի հրամայականներն ու կրթակարգի շարունակական արդիականացումը պարտադրում են կիրառել ուսուցման նորարարական մոտե-

ցումներ, ստեղծագործաբար համակցել մեթոդները՝ խթանելով սովորողների հետաքրքրությունը: Ներքին ակտիվ դիրքորոշման շնորհիվ թվացյալ խնդիրները դառնում են հաղթահարելի, սովորողներն առանց լարվածության ու պարտադրանքի են ընկալում դասանյութի բովանդակությունը: Այժմ առաջնային է սովորողի անհատական-հոգեբանական վերաբերմունքը գիտելիքի ձեռքբերման նկատմամբ, քանի որ աշխարհում մրցունակ մասնագետ լինելու համար պետք է միշտ սովորել: Սովորելը պետք է դառնա բնական ու հաճելի կենսակերպ:

Մոտիվացիան այն գործոնն է, որն ուղղորդում է սովորողի գործունեությունը և ապահովում ուսուցման արդյունավետությունը. այն սովորելու, դասանյութը նորովի յուրացնելու ու վերաիմաստավորելու ցանկություն ու հնարավորություն է ընձեռում: Հատկապես սկզբնական կրթության ոլորտում է մոտիվացիայի դերը որոշիչ, քանի որ երեխաներն աշխարհի հետ դեռ հիմնականում հաղորդակցվում են զգայական ու հուզական ընկալումների միջնորդավորվածությամբ: Ուստի կարևոր է կերտել այն նուրբ, բայց կայուն կամրջակը, որն իրար կկապի երեխայի ներաշխարհն ու իրականությունը: Հոգեբանները նույնպես փաստում են, որ սովորողի՝ դասապրոցեսի հանդեպ ունեցած վերաբերմունքը հիմնարար է: Մոտիվացիան դասավանդման գործընթացը ակտիվ և հետաքրքիր պահող զարկերակ է: Ուսուցիչը պետք է կարողանա ձևավորել այդ հատկանիշն իր մասնագիտական գիտելիքների ու անհատական, ստեղծագործական մոտեցումների շնորհիվ: Մոտիվացիայի գործոնը երբեմն անտեսվում է և որպես հետևանք՝ ունենում ենք խնդիր: Հատկապես հիմա, երբ խոսվում է գնահատման համակարգի փոփոխման մասին, ուսուցիչները մտահոգված են, թե ինչպես են շահագրգռելու և սովորելու դրդապատճառներ փոխանցելու երեխային: Ըստ հոգեբան Նալչաջյանի՝ սկզբում անձն ունենում է որևէ դրդապատճառ, որի ազդեցության տակ նրանում միտք է ծնվում: Այդ միտքը ձևավորվում է ներքին խոսքում, այնուհետև արտաքին խոսքում: Ուսուցիչը պետք է կերտի այդ դրդապատճառը ստեղծելու, մոտիվացիան մշտապես արթուն պահելու բազմաթիվ հնարեղանակներ: Դրանցից մեկը կարող է լինել բանավեճի մեթոդը, որի բովանդակային մոդելում կարելի է ներառել նպատակային՝ կրթադաստիարակչական և ուսուցողական բովանդակություն: Այժմ արդեն երեխային դուր չի գալիս անգիր անել կանոններ ու բառապաշար, վերարտադրել դասը, նա ինքը ևս պիտի բացահայտի ու իրացնի իր ստեղծագործ ներուժը, հաճույք ստանա սովորելու գործընթացից, ունենա ներդրում, սպառողից վերածվի նաև

ստեղծողի: Այդպիսի աշակերտը կարող է ոգեշնչել ու սովորեցնել նաև իր դասընկերներին: Տարրական դասարանների աշակերտը դեռ չի դրսևորում գիտակցական մոտեցում գիտելիքների ձեռքբերման նկատմամբ, ուստի հատկապես գրավիչ դասապրոցեսի միջոցով կարող ենք նրան փոխանցել գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ համակարգը: Հոգեբան Արզումանյանը փաստում է, որ հետկամածին ուշադրության միջոցով ենթագիտակցությունում ամրակայվում են երևույթները: Հետկամածին է կոչվում ուշադրության այն տեսակը, որը ծագում է գործունեության մեջ մարդու մտնելու և աշխատելու ընթացքում հետաքրքրության առաջացման շնորհիվ, որի արդյունքում երկար ժամանակահատվածում պահպանվում է նպատակաուղղվածությունը, հանվում լարվածությունը, և մարդը չի հոգնում: Ապացուցված է, որ ուժեղ մոտիվացիա ունեցող, բայց պակաս ընդունակ սովորողը կարող է հասնել ավելի մեծ հաջողության, քան ավելի ընդունակ, բայց թույլ մոտիվացիա ունեցողը : Ուսուցիչը պետք է առավելագույն կերպով նպաստի մոտիվացիայի ձևավորմանը: Կան մոտիվացիայի արտաքին ու ներքին տարատեսակներ, դասավանդողը պետք է հոգեբանամանկավարժական ճկունություն ցուցաբերի և ընտրողաբար համակցի դրանք՝ հնարավորինս լավ ելքային արդյունք գրանցելու համար:

Մեր հոդվածի առաջնային նպատակն է մշակել քայլային հաջորդականություն, որը մեզ կօգնի բանավեճի մեթոդի միջոցով ուժեղացնել սովորողների մոտիվացիան: Մենք կփորձենք ցույց տալ, որ տվյալ մեթոդը նպաստում է սովորողների մոտիվացիայի ձևավորմանը և դրան որոշակի կայունություն է հաղորդում:

Առանձնացրել ենք հետևյալ հատուկ նպատակները.

- ✓ նկարագրել մեթոդի էությունը,
- ✓ ուսումնասիրել մեթոդի ներուժը մոտիվացիայի ձևավորման տեսանկյունից,
- ✓ ընդգծել մեթոդի կիրառման կարևորությունը,
- ✓ ուսումնասիրել մեթոդի առանձնահատկություններն ու հնարավորությունները,
- ✓ բացահայտել մեթոդի ազդեցիկությունը՝ սովորողների մոտիվացիայի ձևավորման հարցում,
- ✓ նկարագրել, թե ինչպես մեթոդը կարող է կիրառվել,
- ✓ մշակել մեթոդի կիրառման քայլային հաջորդականություն,

- ✓ գնահատել կիրառման արդյունքը փորձարարական ուսուցման արդյունքների վերլուծության միջոցով:

Ժամանակակից սովորողը չպետք է ընկրկի դժվարություններից, միշտ պետք է կարողանա հասանելի դարձնել արդյունքը, պատասխանատվություն կրի իր որոշումների և դրանց իրականացման համար, ստեղծագործ լինի, քանի որ այժմյան կրթակարգը այլընտրանք չունի՝ ակտիվ ու նախաձեռնող, ոչ ստանդարտ մտածող մարդն է ընդունակ լիարժեք ինքնահիրացվելու:

Նախ համառոտ նկարագրենք մոտիվացիայի կառուցվածքը: Ներքին մոտիվացիան առաջանում է անձի ներսում և կապված չէ գնահատականի ակնկալիքի հետ, այլ ենթադրում է, որ սովորողը պետք է հաճույք ստանա սովորելիս: Մոտիվացիայի այս տեսակն ավելի անկախ ու արժեքավոր է, քանի որ ինքնին նպաստում է գիտելիքի ձեռքբերմանը: Ըստ հոգեբան Նոելսի՝ այն ունի երեք տարատեսակ՝ նոր գիտելիքից հաճույք ստանալը, նպատակին հասնելուց հաճույք ստանալը, հանձնարարությունը հաճույքով կատարելը: Այսպիսի սովորողներն ավելի ինքնուրույն են ու նպատակասլաց, հակված են մարտահրավերներ հաղթահարելու: Արտաքին մոտիվացիան կապված է գնահատականի կամ այլ տեսակի նյութական մրցանակի ակնկալման հետ: Այսինքն՝ աշակերտը հիմնականում սովորում է, քանի որ պարտավորված է, որոշակի ճնշում է զգում և ուզում է խուսափել պատժից (վատ գնահատական և այլն): Որոշ հոգեբաններ առանձնացնում են նաև մոտիվացիայի մեկ այլ տեսակ՝ ինտեգրատիվը, երբ երեխան ուզում է կոլեկտիվի մասը լինել, իրեն լավ է զգում, երբ ակտիվորեն ներառվում է գործընթացում:

Հոգելեզվաբան Լեոնտևն այսպես է նկարագրում խոսքային գործընթացի առաջացումը.

1. Մոտիվացիայի ձևավորում, որը ակտիվացնում է մարդուն և մինչխոսքային գործոն է:
2. Մտահղացման առաջացում, երբ գիտակցվում են խնդիրն ու ցանկալի արդյունքը:
3. Գործողության ներքին ծրագրի ստեղծում մոտիվացիայի շնորհիվ:
4. Խոսքի շարահյուսական և հնչյունային իրականացման փուլեր:

Բանավեճի ընթացքում տեղի է ունենում պոլիգոգ, հաղորդակցական դերերը փոփոխվում են, արտաքին և ներքին խոսքերը հաջորդաբար փոխակերպվում են՝ ինֆորմացիան հաղորդելով գիտակցությանը: Գործնական

փորձառությունը համակցվում է տեսական գիտելիքին և վերջինիս արտահայտչամիջոցն է դառնում:

Կրտսեր դպրոցականների մտածողությունը պատկերային է, նրանց երևակայությունն անկանխատեսելի ու գունեղ է: Ուսուցիչը պետք է նախադրյալներ ստեղծի դրանց անկաշկանդ դրսևորման համար: Երեխաները հաղորդակցական հմտություններ են ձեռք բերում, սովորում են միմյանց լսել, ապրումակցում դրսևորել, հարգել ու ընդունել տարակարծությունը:

Բանավեճի մեթոդն իր մեջ կրում է խաղի տարր:

Բանավեճին նախապատրաստվելիս պետք է հաշվի առնել, որ

- ✓ բոլոր սովորողները իրավահավասար են, կարող են ազատորեն արտահայտվել: Ձևավորվելու է խմբային և համագործակցային մթնոլորտ, որտեղ հարգվում և գնահատվում է անհատականությունը, պետք է զարգացնել միջանձնային հաղորդակցության հմտությունը, որի կարևորագույն բաղկացուցիչն է ուրիշի խոսքն անհարկի չընդհատելու, լսածն ընկալելու պատրաստակամությունն ու կարողությունը:
- ✓ Կարևոր է կամային հատկանիշների զարգացումը, որոշումներ կայացնելու և դրանք հիմնավորված ներկայացնելու, իրագործելու կարողության ձևավորումը:

Ահա քայլերի առաջարկվող հաջորդականությունը, որը կիրառվել է և արդյունավետ է եղել: Մեթոդի կիրառության հնարավորությունը պետք է հասունանա աստիճանաբար:

- Նախապատրաստական էվրիստիկ զրույց, որի ընթացքում ուսուցիչն ու երեխաները երկխոսական քննարկման միջոցով կարևորում են ստեղծագործական ազատությունը և մտքի ինքնատիպությունը: Երեխային պետք է փոխանցել վստահություն, որ իր մտածելակերպը չի որակվի որպես սխալ կամ պարսավելի, գոյության անառարկելի իրավունք ունեն իր պատկերացումները, իսկ երևակայությունը ենթադրում է անսահմանություն և մտքի ճախր:
- Ընտրվում են այնպիսի թեմաներ, որոնք համապատասխանում են երեխաների նախասիրություններին: Օրինակ՝ կարելի է սկզբում բանավիճել կենցաղային ու առօրյա թեմաների շուրջ: Մայրենիի դասագրքում նույնպես կան թեմաներ, որոնք կարելի է կապել իրականության հետ և հետզհետե քննարկման ոլորտն ընդարձակել:

- Տրամբանական խաղերի, հարց ու պատասխանի միջոցով մարզել երեխաների հիշողությունը, զարգացնել վերացարկված մտածողությունը: Սովորություն դարձնել վերլուծաբար մտածելը՝ անալիզ, սինթեզ, համադրում, փաստարկում և այլ մտածական գործընթացներ իրականացնելը:
- Ձևավորել սեփական կարծիք կազմելու և այն փաստարկված ներկայացնելու հմտություն: Տուրք չտալ «հոտային գիտակցություն» կոչվող ֆենոմենին:
- Վերահսկել այնպես, որ ուսուցչի ազդեցությունն ու կարծիքը պարտադրող չլինեն:

Իսկ բանավեճի նախապատրաստական աշխատանքը կարելի է կազմակերպել հետևյալ կերպ. մասնակից խմբեր ձևավորելիս հաշվի առնել երեխաների անձնային դիքորոշումը, կենսափորձը, խառնվածքը՝ խումբը կազմել այնպես, որ մասնակիցները փոխլրացնեն միմյանց: Օրինակ՝ նույն թիմում լինեն խոսնակի դերը սիրով ստանձնող, հաշվենկատ տրամաբանող, գեղարվեստական-հուզական մտածելակերպ ունեցող մասնակիցներ: Բանավեճի մեթոդի շնորհիվ ստեղծվում է անկաշկանդ միջավայր, երեխան հընթացս սոցիալականացվում է, բարելավում է բանավոր խոսքը, առանց վախենալու արտահայտում է իր հույզերն ու կարծիքները՝ կիրառելով նաև ոչ վերբալ հաղորդակցում: Խոսքի զարգացման համար երեխայի կրտսեր դպրոցական տարիքը անփոխարինելի մի ժամանակաշրջան է: Այս տարիքում երեխան տարերայնորեն ընկալում է լեզվի այն հիմնական ատաղձն ու յուրահատկությունները, որը հաճախ շատ մեծ ջանքերի շնորհիվ է հաջողվում չափահաս մարդկանց: Խոսքը մարդու մեջ ծագած մտքերի, խոհերի ու զգացմունքների դրսևորման ամենակատարյալ ձևն է [5, 404]: Երեխան պիտի գիտակցի, որ մայրենին սովորում են ոչ միայն գնահատական ստանալու, այլև սեփական հույզերն ու մտքերը արտահայտելու, արդյունավետ հաղորդակցվելու համար: Երեխայի մոտ կուտակված բառապաշարը դառնում է բանավոր ինքնարտահայտման բովանդակային հիմքը: Նա հետզհետե ավելի բարդ խոսքային կառույցներ է կարողանում կերտել: Ուսուցիչն ուշադիր պիտի լինի ընտրվող նյութի նկատմամբ: Թեման պիտի լինի դինամիկ ու ուշագրավ, մատչելի: Պետք է ունենա խաղարկային տարրեր ու ստեղծագործական մոտեցումը խթանի: Բանավեճի ընթացքը պետք է լինի ոչ միօրինակ: Այն նպաստում է բանավոր խոսքի զարգացմանը:

Բանավեճն առաջացնում է հուզազգայական վերաբերմունք: Թեման հասունանում է երեխայի մտքում ու ամբողջական է դառնում: Եթե ուսու-

ցումն ուղեկցվում է հույզերով, ապա դա օգնում է երկարատև մտապահել բովանդակությունը, յուրացնել էությունը: Այստեղ բանավեճն ընդամենը ձև է, փոխանցման ուղի: Սրտեսիրտ ընկած ծիածանի պես՝ դրական, համագործակցային միջավայրը դառնում է մոտիվացիայի ձևավորման գրավական: Առողջ մրցակցության շնորհիվ երեխան սովորում է ինքնարտահայտվել ու ապրումակցել, զիջել ու աջակցել, նպատակասլացություն դրսևորել, ընդլայնել աշխարհայացքն ու հարստացնել բառապաշարը: Սեփական հաջողությունը դառնում է յուրօրինակ ցատկահարթակ՝ նորանոր հաջողությունների համար: Երեխան ունենում է ինքն իրեն հաղթահարելով առաջ գնալու հոգեբանական փորձ, որը նրան ինքնավստահություն ու հաստատակամություն է փոխանցում և դառնում է բնականոն: Հոգեվիճակը որոշիչ է ցանկացած գործունեություն իրականացնելիս: Այսպես կոչված վերելքային զգացողությունը (մոտիվացիան) ոգեղենության բաղադրիչ է հավելում կենսառճին, ինքնարժևորում է սովորողին: Ոչ այնքան կարևոր են բանավեճի արդյունքները, որքան բուն ընթացքը: Երեխան պետք է կարողանա թեման ու քննարկումն ընկալել վերացարկված՝ անձնական նեղ ընկալումից զերծ: Դրա շնորհիվ նա կսովորի հարգել նաև այլոց կարծիքը, ամեն ինչ չտեղափոխել միջանձնային հարաբերությունների ոլորտ: Ուսուցիչը ստեղծում է այնպիսի մթնոլորտ, որտեղ արժևորվում է գաղափարը:

Չափորոշիչը սահմանում է, որ տարրական դպրոցն ավարտողը պետք է կարողանա լսել խոսքը, բանավիճել՝ նոր փաստարկներ ու հիմնավորումներ ներկայացնելով: Իր կարծիքը, գաղափարները հաստատելու համար վկայություններ, փաստարկներ օգտագործել՝ դրսևորելով խոսքի նկարագրական ոճ: Ավանդական մեթոդները նման մակարդակ չեն ապահովի: Մենք բնավ չեն ժխտում վերջիններիս կարևորությունը, բայց ժամանակակից ուսուցիչը պետք է նաև ոչ ստանդարտ մեթոդներով աշխատի, համակցի դրանք, հորինի նորերը:

Բանավեճի նախապատրաստական շրջանում կարող ենք առանձնացնել երեք փուլ.

ա) մտահղացման նյութականացում,

բ) փորձառության ձեռքբերում,

գ) արդյունքի վերլուծություն:

Բանավեճը սկսելուց առաջ կարելի է մշակել, թղթի վրա գրառել ու պատին փակցնել որոշակի կանոններ, որոնք պարտադիր են (օրինակ՝ Ծաղրելն արգելվում է: Պահպանել բարյացակամ վերաբերմունք: Վիճել ոչ

թե հանուն վիճելու, այլ հանուն ճշմարտության և այլն:): Խոսքը վերաբերում է քաղաքավարությանը և ընդունելի բառապաշարին: Այնուհետև ձևավորված խմբերի հետ մշակել թեման՝ նախապես գրի առնելով կողմ և դեմ փաստարկները, հակափաստարկները, մրցակից խմբին տրվելիք հարցերը: Կոնստրուկտիվ բանավեճի շնորհիվ թեման ուսումնասիրվում է խորությամբ ու հիմնովին: Արդյունքները համակարգելիս հանրագումարի գալու և փոխադարձաբար զիջելու մշակույթ ձևավորել:

Երեխան պետք է չվախենա հնարավոր վրիպակներից, այլ անեկեղծորեն քննարկի դրանք և աշխատի շտկել: Կարևոր է նաև ուսուցչի նրբանկատ վերաբերմունքն ու սովորողների ստացած ճանաչողական հաճույքը: Բանավեճը որոնողական գործընթաց է, որի վեկտորն ուղղված է դեպի ճշմարտությունը: Առհասարակ ուսուցիչը կարող է երեխաներին ուղղել տարօրինակ հարցեր, որոնք վերացական մտածելակերպի զարգացման նախադրյալներ կստեղծեն: Օրինակ՝ ինչ կլիներ, եթե հենց հիմա հայտնվեր մի ջրահարս ու կախարդական խեցի նվիրեր: Սա չի նշանակում, որ լուրջ հարցեր չի կարելի քննարկել երեխաների հետ: Օրինակ՝ անտուն կենդանիների կամ պատերազմի մասին: Երեխային պետք է վերաբերվել ինչպես մեծի, քանի որ մեծանալը նրանց երազանքն է:

Երեխան շրջապատող աշխարհի հանդեպ ունի իր յուրատիպ ընկալումը, զգացական ու մտածական վերաբերմունքը, ուստի նրա մոտ արտահայտվելու մոտիվացիա է առաջանում ինքնաբերաբար: Եթե չառաջանա երեխայի արտահայտվելու, հաղորդակցվելու ցանկություն, նա չի խոսի, և եթե նրան չտրվի իր զգացածի, տեսածի, լսածի մասին խոսելու, արտահայտվելու հնարավորություն, ապա երեխայի հոգեկան ու մտավոր աշխարհին լուրջ վնաս կհասցվի: Ուսուցիչը պետք է ապահովի հաղորդակցման որոշակի իրադրություն[7,269]: Բանավեճի մեթոդը մեզ տալիս է այդ հնարավորությունը լիարժեքորեն: Երեխաների համար հետաքրքիր է իրենց ուրիշների տեղ դնելը, ուրիշի ներաշխարհը ընկալելը, սեփական պատկերացումների համաձայն այս կամ այն գաղափարը ներկայացնելը: Նրանք այսպիսով հասկանում, ընդունելի են համարում նաև այլոց մեկնաբանությունը, չեն ձանձրանում: Բանավեճը տպավորություն է թողնում, ավելի ստեղծարար ու մոտիվացված է դարձնում սովորողներին, դասապրոցեսը դարձնում է գունեղ: Մոդիֆիկացիաների փնտրտուքը երեխաներին ավելի հնարամիտ է դարձնում, նպաստում է անհատական աճին և միևնույն ժամանակ «թիմային խաղացող» է դարձնում: Վեցամյա երեխան դպրոց մտնելիս ար-

դեն իսկ լի է գեղեցիկ ու յուրօրինակ գաղափարներով, պետք է միայն դրանք արտահայտելու ազատություն տալ նրան: Ուսուցիչը ղեկավար չէ, նա նույնպես թիմակից ու համախոհ է: Դասավանդող-սովորող ակտիվ փոխներգործության շնորհիվ տեղի է ունենում երկուստեք որակական վերափոխում:

Գեղարքունիքի մարզի Գագարինի միջնակարգ դպրոցում մենք մի քանի բանավեճեր կազմակերպելուց հետո իրականացրինք մի փոքրիկ հարցախույզ.

1. Սիրո՞վ ես մասնակցում բանավեճերին:
2. Բանավեճի կազմակերպման ո՞ր փուլն ես հավանում:
3. Կուզեի՞ր հետագայում էլ այս մեթոդով սովորել:
4. Կուզեի՞ր ինքդ քննարկման թեմաներ ընտրել ու մասնակից թիմեր ձևավորել:

Հարցմանը մասնակցել են չորրորդ դասարանի քսան երեխաներ. առաջին հարցի վերաբերյալ բոլորի պատասխանը հաստատական էր: Անակնկալ էր այն, որ հարցվածների շուրջ վաթսուն տոկոսը նշեց, որ նախապատրաստական փուլն է իրեն դուր եկել: Իննսուն տոկոսը նշեց, որ կուզեր այդ մեթոդով այսուհետ էլ սովորել, և միայն տասը տոկոսը նշեց, որ չէր ուզի բանավեճի մասնակցել: Կարող ենք արձանագրել, որ բանավեճի մեթոդը մոտիվացիա և կազմակերպչական ունակություն էր ձևավորել, քանի որ իննսուն տոկոսը ցանկանում էին նախաձեռնողականություն ցուցաբերել:

Մոտիվացիան բարդ կառուցվածք ու անհատական բնույթ ունի, քանի որ մարդիկ տարբեր են և ունեն տարբեր պահանջմունքներ ու երազանքներ, բայց ակնհայտ է, որ մոտիվացիան ենթակա է ձևավորման, փոփոխման ու զարգացման, ուստի միշտ անհրաժեշտ է կիրառել դասավանդման նորարարական մոտեցումներ: Ժամանակակից կրթակարգի նպատակն է ոչ միայն գրագետ դարձնել երեխային, այլև ռացիոնալ ու ստեղծարար մտածելակերպ փոխանցել, ինքնաբավ դարձնել ու անհատականություն կերտել: Եթե կա փոխելու ցանկություն, ուրեմն առաջընթաց կլինի: Ուսուցչի մարտահրավերն է՝ ***այնպես անել, որ երեխան պատրաստ լինի մշտապես սովորելու ու խիզախելու***:

Օգտագործված գրականության ցանկ

1. Նալչաջյան Ա. Ա., Ընդհանուր հոգեբանության հիմունքներ, Երևան, 1991:

2. Արզումանյան Ս. Ջ , Երևան, 2005:
3. Noels A. C., Learners' Orientation and Perception of their Teachers' Communication styles, A Journal of Research in Language Studies, New York, Volume 51, 2011.
4. Леонтьев А. А., Психология общения, Тарту, 1974.
5. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա,Երևան,1980:
6. Ուսուցիչների հնգօրյա վերապատրաստման պլան և նյութեր, Երևան, 2006:
7. Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015:

FORMATION OF STUDENT MOTIVATION BY THE DISCUSSION METHOD

ASOYAN TATUL
PhD in Philology, Associate Professor,
Dean of the Faculty of Philology, GSU
e-mail: asoyan.60@mail.ru
BRAGINA NELLI
1st-year Master student,
Department of Primary Pedagogy and Methodology
Faculty of Humanities,
e-mail: nelli.bragina@list.ru

The given paper presents the results of the experimental teaching with the use of the discussion method. Our overall goal was to check experimentally the possibilities of using this method in order to develop the learners' motivation. It develops the speaking skills of learners and trains their analytical thinking ability. The results of the experimental teaching show that the discussion method helps to enhance the motivation of learners. The use of this method can be time-consuming, yet an effective tool of teaching.

Key words: *Motivation, discussion, methodology, experimental teaching, interaction, creative potential.*

ПОЛЕМИКА КАК МЕТОД, ФОРМИРУЮЩИЙ МОТИВАЦИЮ УЧАЩИХСЯ

АСОЯН ТАТУЛ
Кандидат филологических наук, доцент,
Декан филологического факультета ГГУ
электронная почта: asoyan.60@mail.ru
БРАГИНА НЕЛЛИ
Студентка 1-го курса отделения
педагогики и методики начального образования
гуманитарного факульта ГГУ
электронная почта: nelli.bragina@list.ru

В данной статье представлены результаты опытного обучения с использованием метода полемики в начальных классах.

Нашей целью было путем опытного обучения проверить как использование данного метода влияет на формирование и развитие мотивации. Результаты проведенного опытного обучения показывают, что данный метод помогает повысить мотивацию учащихся. Использование метода требует определенного количества времени, однако он может быть весьма эффективным инструментом в процессе обучения.

Ключевые слова: *мотивация, полемика, метод, опытное обучение, интерактивность, творческий потенциал.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 27.08.2021թ.:
Հոդվածը գրախոսվել է 22.09.2021թ.: